**ՏԻԽՈՆ ԶԱԴՈՆՍԿԻ**

# Աստծուն սիրելու մասին

*Սկիզբը՝ նախորդ համարում*

Սիրո նշանները սրանք են.

1. Ինքն Աստված է ցույց տալիս՝ ասելով. «Ով իմ պատվիրաններն ընդունում եւ դրանք պահում է, նա է, որ ինձ սիրում է» (Յովհ. ԺԴ 21): Աստծուն ճշմարիտ սիրողն այն ամենից, ինչ Աստծուն հակառակ է, հեռու է մնում, եւ այն ամենը, ինչ Նրան հաճելի է, աշխատում է կատարել, այդ պատճառով էլ Նրա սուրբ պատվիրաններն է պահում: Իսկ սրանից հետեւում է, որ Աստծուն չեն սիրում այն քրիստոնյաները, ովքեր նրա պատվիրանները չեն պահում: Սրանց են պատկանում չարերը եւ ինչ-ինչ ձեւով մյուսներին վնասողները, պոռնիկները, շնացողները եւ բոլոր պղծողները, գողերը, գիշատիչներն ու ավազակները եւ բոլոր նրանք, ովքեր անարդարորեն ուրիշի ունեցվածքը գրավում են,- դրանց թվին են պատկանում զրպարտողները եւ հայհոյողները, խորամանկներն ու նենգերը, գայթակղողները, խաբեբաները եւ երեսպաշտները, կախարդներն ու նրանց իրենց մոտ կանչողները եւ բոլոր օրինազանցները: Սրանք բոլորն էլ, ինչպես աշխարհի շքեղությունների, հարուստ տների, շքեղ կառքերի, ճոխ ճաշերի մեջ են տեսնում, թանկարժեք հանդերձներ հագնում, բոլորից փառաբանվում, պատվվում եւ այլն:



Այդպիսիները մարմնական կիրքը, աչքերի շնորհությունը եւ կենցաղային հպարտությունն են սիրում, այսինքն՝ սիրում են այն, ինչ Աստծուն հակառակ է, բայց ոչ Աստծուն:

4. Աստծուն ճշմարիտ սիրողն Աստծուն, Նրա սերը մեր հանդեպ եւ Նրա բարերարությունն իր անմոռաց հիշողության մեջ է ունենում: Սա տեսնում ենք նաեւ մարդկային սիրո մեջ. քանզի ում սիրում ենք, նրան հաճախ ենք հիշում: Այդպես էլ, ով Աստծուն սիրում է, հաճախ է Նրան հիշում, մտորում Նրա մասին, այսպես մխիթարվում եւ դեպի Նա բարձրանում, քանզի ուր նրա գանձն է, այնտեղ է նաեւ՝ սիրտը: Նրա համար Աստվածն անգնահատելի եւ ամենասիրելի գանձն է, ուստի նրա սիրտը միշտ անբաժան է Նրանից: Այստեղից էլ՝ հաճախ է Նրա սուրբ անունը սիրով հիշում, սիրտն էլ՝ Աստծո սիրով լցված, ներքին սիրալիր նշաններ է ցույց տալիս: Այստեղից էլ տեսնում ենք, որ Աստծուն չեն սիրում նրանք, ովքեր Նրան մոռանում են: Մոռացությունն ակնբախ նշանն է Աստծուն չսիրելու: Սիրողը սիրեցյալին մոռանալ չի կարող:

5. Սիրողը սիրեցյալից անբաժան է ուզում լինել: Շատ քրիստոնյաներ են ուզում Քրիստոսի Աստծո հետ փառավորվել, բայց Նրա հետ անպատվության եւ անարգանքի մեջ լինել եւ խաչը կրել՝ չեն ուզում: Աղոթում են Նրան՝ Նրա արքայության մեջ լինելու համար, բայց աշխարհում տառապել չեն ուզում, եւ դրանով ապացուցում, որ իրենց սիրտն անարդար է, եւ Քրիստոսին էլ ճշմարտապես չեն սիրում, ճշմարիտն ասած՝ իրենց ավելի են սիրում, քան Քրիստոսին: Սրանց մասին է Աստվածն ասում. «Ով իր խաչը չի վերցնում ու իմ հետեւից չի գալիս, ինձ արժանի չէ» (Մատթ. Ժ 38): Ճշմարիտ ընկերը դժբախտության մեջ է երեւում: Մեր այդ ճշմարիտ ընկերն է մեզ սիրողը, ով մեզ դժբախտության մեջ չի թողնում: Աստծուն ճշմարիտ սիրողն էլ նա է, ով այստեղ՝ այս աշխարհում է Քրիստոսի հետ լինում, Նրան ուրացող մերժենում, Նրա հետ անտրտունջ կրում խաչը եւ ապագայում էլ ուզում է Նրանից անբաժան լինել: Այդպիսին ի սրտե ասում է Քրիստոսին. «Ինձ համար բարիք է մերձենալ Աստծուն» (Սաղմ. ՀԲ 28):

6. Աստծուն սիրելու նշանը սերն է մերձավորի հանդեպ: Ով Աստծուն իսկապես սիրում է, նա սիրում է նաեւ մերձավորին: Ով սիրողին է սիրում, նա սիրում է նաեւ նրանից սիրվողին: Մերձավորին սիրելու աղբյուրը սերն է առ Աստված, բայց Աստծուն սիրելը երեւում է դիմացինին սիրելուց: Այստեղից էլ ակնհայտ է, որ Աստծուն չի սիրում նա, ով մերձավորին չի սիրում, ինչպես ուսուցանում է առաքյալը. «Եթե մեկն ասի, թե սիրում է Աստծուն եւ ատի իր եղբորը, սուտ է խոսում. ով չի սիրում իր եղբորը, որին տեսնում է, ինչպե՞ս կարող է սիրել Աստծուն, որին չի տեսել: Եվ նրանից ունենք այս պատվիրանը՝ ով սիրում է Աստծուն, նա պետք է սիրի նաեւ իր եղբորը» (Ա. Յովհ. Դ 20-21): Սրանք են Աստծուն սիրելու նշանները՝ թաքնված մարդկային սրտում:

Սիրելի քրիստոնյաներ, ապաշխարենք, աշխարհի ունայնությունից մի կողմ քաշվենք ու մեր սրտերը մաքրենք զղջմամբ եւ վշտով, որպեսզի Աստծո սերը մեր մեջ բնակվի. «Եվ մենք հավատացինք ու ճանաչեցինք Աստծո սերը, որ Նա ունի մեր հանդեպ: Աստված սեր է, եւ ով սիրո մեջ է պատրում, Աստծո մեջ է բնակվում, Աստված էլ՝ նրա մեջ» (Ա Յովհ. Դ 16):

Աստծո Որդին, այնպես էլ հենց Աստծուն չեն սիրում. նրանք իրենց եւ իրենց ցանկություններն են սիրում եւ ոչ թե Աստծուն եւ Նրա սուրբ Որդուն:

2. Աստծուն սիրելու ակնհայտ նշանը սրտի ուրախությունն է առ Աստված. քանի որ ում սիրում ենք, նրա համար էլ ուրախանում ենք: Այդպես էլ առանց ուրախության Աստծուն սիրել չի լինում, եւ որքան մարդ իր սրտում Աստծուն սիրելու քաղցրությունն է զգում, այդքան էլ ուրախանում է Աստծո համար: Սերն էլ, որպես ամենաքաղցր առաքինություն, առանց ուրախության հնարավոր չէ զգալ: Ինչպես մեղրն է քաղցրացնում քիմքը, երբ այն ճաշակում ենք, այդպես էլ Աստծո սերն է մեր սիրտն ուրախացնում, երբ ճաշակում ենք եւ տեսնում, «որ քաղցր է Տերը» (Սաղմ. ԼԳ 9): Առ Աստված այդպիսի ուրախությունը Սուրբ Գրքի շատ տեղերում եւ հատկապես սուրբ սաղմոսներում է նկարագրվում: Այս ուրախությունը հոգեւոր է, երկնային եւ ճաշակումն է հավիտենական կյանքի քաղցրության:

3. Աստծուն ճշմարիտ սիրողն աշխարհը եւ ամեն բան, ինչ աշխարհում է, արհամարհում է եւ իր միակ ամենասիրելի Աստծուն ձգտում: Պատիվը, փառքը, հարստությունը եւ այս աշխարհի բոլոր հաճույքները, որ փնտրում են այս դարի որդիները, նա ոչինչ է համարում. նրան միայն Աստված՝ անստեղծ եւ ամենասիրելի Բարիքն է տիրում: Նա միայն Նրանում է գտնում կատարյալ պատիվը, փառքը, հարստությունը եւ հաճույքը, նրա համար լոկ Աստվածն է թանկարժեք մարգարիտը, որի առջեւ մյուս բոլոր բաները ոչինչ են: Նման մարդը ոչինչ, Աստծուց զատ, ո՛չ երկնքում, ո՛չ էլ երկրի վրա չի ցանկանում: Այդպիսի սերը սաղմոսերգական այս բառերում է նկարագրված՝ «Արդարեւ, ի՞նչ կա երկնքում, կամ քեզանից բացի ի՞նչ փնտրեմ երկրի վրա: Սիրտս ու մարմինս մաշվեցին. իմ սրտի Աստված, հավիտյան ինձ բաժին ընկած Աստված» (Սաղմ. ՀԲ 25-26): Այդպիսի կերակուրները, ըմպելիքները, հագուստներն ու մյուս բաները միայն պահանջի եւ ոչ թե հեշտասիրությանն է ծառայեցնում: Սրանից էլ հետեւում է, որ Աստծուն չի սիրում նա, ով, ըստ առաքյալի, աշխարհն է սիրում. «Եթե մեկը սիրում է աշխարհը, Հոր սերը նրա մեջ չէ» (Ա Յովհ. Բ 16): Այսպիսին է էությունը նրանց, ովքեր իրենց հաճույքը միայն հպարտության եւ այս

*Ռուսերենից թարգմանեցին՝*
*Վահրամ քհն. Մելիքյանը*
*Տիգրան սրկ. Բաղումյանը*

*Святитель Тихон Задонский, Наставление о собственных всякого христианина должностях, Москва 1998, стр 155-164.*

# ՏԵԿՈՐ-ՄՈՒՂՆԻ ԳՄԲԵԹԱՎՈՐ ԲԱԶԻԼԻԿ ՇՂԹԱՅԻ ԳԼՈՒԽԳՈՐԾՈՑԸ



*Սկիզբը՝ նախորդ համարում*

Քաղաքացիական կյանքի եւ աշխարհիկ մտածողության բուռն զարգացումը X-XI դարերում իր կնիքն է դրել Անիի Մայր եկեղեցու ճարտարապետության՝ հատկապես գեղարվեստական հարդարանքի ուղղվածության վրա: Դրանում կարեւորություն է տրված կառույցի ճակատային հարթությունների պլաստիկ մշակմանը, զուտ նկարչագեղությանը, քարի գեղարվեստական հատկանիշների բացահայտմանը, բազմագունությանը, ընկալման լավագույն պայմանների հաշվի առնմանը, միջավայրի հետ շաղկապմանը. հատկանիշներ, որոնք դրսեւորվում են առավելագույն չափով: Արտաքին պատերի մեղմ, մտերմիկ տպավորության հարցում որոշիչ դեր են կատարում երեք ճակատների (բացի արեւմտյանից) եռանկյունաձեւ կտրվածքով, զարդաքանդակներով համեմված, խոր ընկած զույգ խորշերը, նրբին քանդակներով շքամուտքերը, նեղ ու ձգված պատուհանների եզրակալները, հյուսկենազարդ քիվերը, գունային վճիտ նրբերանգները, ասես, եկեղեցու ամբողջությունը շաղախող գեղանի զարդակամարները: Հատկապես շքեղ ու շեշտված է եղել հարավային շքամուտքը, որ անվանել են արքայական: Ճակատային խորշերը, մեղմացնելով որմնամույթերի եւ պատերի միացման հանգույցների զանգվածեղությունը, գեղարվեստական նշանակության հետ միասին պահում են կառուցքային դերը, ինչը քիչ նկատելի է ավելի ուշ շրջանի հուշարձաններում: Եթե պատերի ճակատային որմածքում գունային ներդաշնակման առումով բաց եւ մուգ երանգի քարերն օգտագործված են ազատ, անկաշկանդ տեղադրմամբ՝ առանց որեւէ օրինաչափության, ապա մույթերի, որմնամույթերի եւ կամարների որմածքում գունային ներդաշնակումը միանգամայն կանխակարգված է: Երեւի գունային լուծումների այդ արտասովորությունն է առիթ տվել Ն. Մառին եւ Հ. Օրբելուն կարծելու, թե XII-XIII դարերում եկեղեցու ճակատների երեսապատն ամբողջությամբ նորացվել է:

Մայր եկեղեցին կառուցվել է՝ ելնելով Անի քաղաքի ընդհանուր հորինվածքից, քաղաքաշինական գործոններից, ծավալատարածական եւ գեղարվեստական արտահայտչականության շահերից: Այն սերտորեն կապ ունի քաղաքի պաշտպանական համակարգի հետ, միավորում է կառուցապատման հիմնական բաղադրիչները՝ ներկայացնելով ամբողջական քաղաքաշինական կուռ համակարգի գլխավոր դոմինանտը: Եկեղեցին տեղադրված է քաղաքի ամենաակնառու, ամենաբանուկ մասում՝ հարելով երկու գլխավոր փողոցների (Ավագ դռնից եւ Ախուրյանի մեծ կամրջից սկզբնավորվող) հատման հանգույցին: Այն իր բարձրությամբ եւ զանգվածով միջնաբերդից հետո հանդիսանում է Անիի ամենանշանակալից տարածական շեշտը: Երբ ճարտարապետության տեսաբաններն ասել են, թե ճարտարապետությունը տարածության եւ նյութին տիրելու արվեստն է, թվում է, աչքի առաջ են ունեցել Անիի Մայր եկեղեցին: Կառույցում խտացված են հայ ժողովրդի ճարտարապետական, կառուցվածքային, գեղագիտական եւ ինժեներական մտքի փայլատակումները, դարաշրջանի քաղաքակրթական նկարագիրն ու ազգային հավատապաշտությունը: Կառույցի թիվ 1 հայտանիշը նորարարությունն է՝ անկրկնելի, հավերժական ու ստեղծագործական երեւակայության պոռթկումը: Հ. Լինչը, Հ. Ստրժիգովսկին, Թ. Թորամանյանը եւ ուրիշներ գտնում են, որ եկեղեցու ներքին համաչափությունները, առանձին ձեւեր եւ տարրեր իրենց կիրառումը եւ հետագա զարգացումն ունեցան XII-XIV դարերի Արեւմտյան Եվրոպայի ճարտարապետության մեջ, որ այն «Գոթական ոճի հատկանիշների մեծ մասն ունի եւ նրա արեւելյան նախատիպարն է... ունի հատկանիշները ճարտարապետական մի ոճի, որ կարող ենք գտնել Հարավային Եվրոպայի մեջ ԺԳ դարում» (Հ. Լինչ): Այդ մասին ասում են նաեւ նորերը՝ թերեւս փոքր-ինչ չափազանցումով: Փարիզի Աստվածամոր տաճարն ընդունված է համարել գոթական ոճի առաջին ամենանշանակալից ստեղծագործությունը, իսկ Ֆրանսիան՝ գոթական ոճի հայրենիքը: «Յոթ հրաշալիքներ եւ այլք» գրքի հեղինակ Վ. Չերնյակն այդ կապակցությամբ գրում է. «Սակայն Անիի եկեղեցին, կառուցված հայ ճարտարապետ Տրդատի կողմից 989-1001 թվականներին, արդեն ունի վաղ գոթական շենքի բոլոր հիմնական հատկանիշները: Այդ պատճառով կարծիք կա, թե գոթական կոչված ոճը ստեղծվել է հայ մեծ ճարտարապետ Տրդատի կողմից եւ հետագայում Հայաստանից թափանցել է Արեւմուտք»:

Անիի Մայր եկեղեցու արժեքը մեծ է որպես ճարտարապետական բացառիկ ստեղծագործություն, որում հորինվածքային կատարելությունը ներդաշնակորեն զուգակցված է համարձակ եւ կառուցիկ մտահղացումների, գեղարվեստական հմայիչ ձեւերի ու հարդարանքի տարրերի, շքեղ ու հոգեթով լուծումների հետ:

Հզոր եւ բարեգործ Սմբատ Բ Տիեզերակալ թագավորին (977-989 թթ.) վիճակված չէր ավարտին հասցնել Բագրատունիների տակը հանդիսացող՝ իր սկսած այդ կառույցի շինարարությունը: Նրա վերահաս մահից հետո շինարարության հովանավորությունն իր վրա վերցրեց Գագիկ Ա թագավորի (990-1020 թթ.) կին Կատրանիդեն՝ ավարտելով այն 1001 թվականին՝ Հայաստանում քրիստոնեության հաստատման 700-րդ տարում: Պատահական զուգադիպությո՞ւն է, թե մտածված գործընթաց, դժվար է ասել:

Հայ միջնադարյան ճարտարապետության պատմությանը հայտնի են իշխանազուն կանանց շատ այլ անուններ, որոնք նշանավորվել են իրենց շինարարական գործունեությամբ՝ հանդիսանալով կարեւոր կառույցների նախաձեռնողներ, բարերարներ, ինչպես դրանցից ամենապատկառելին՝ Աշոտ Գ Ողորմած թագավորի (953-977 թթ.) կին Խոսրովանույշ թագուհին՝ Սանահինի եւ Հաղպատի գլխավոր եկեղեցիների մեկենասը: Երեւի հենց նրա օրինակն է ոգեւորել հարսին՝ Կատրանիդեին, Անիի Կաթողիկեն կառուցելիս: Բայց ինչպես նկատում է Լեոն «Սկեսուրն ավելի բախտավոր էր իր հարսից: Նրա եկեղեցիների մեջ այժմ էլ աղոթում է հայը, մինչդեռ հարսի չքնաղ կերտվածքն ամայի է, կիսաքանդ եւ դողալով սպասում է վերջնական կործանման, որ կարող է գալ ամեն օր»: Կարելի է ասել, որ Տրդատ ճարտարապետի հոյաշեն եկեղեցին Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակման 1700-ամյա տարեգրության 1000-ամյա զավակն է: Բայց խնդիրը միայն եկեղեցու կառուցման 1000-ամյակին չի վերաբերում: Կառուցել կաթողիկոսանիստ եւ հայոց հոգեւոր կյանքի խտացումն ու անդրադարձը հանդիսացող եզակի շինություն՝ նշանակում է ունենալ հզոր պետություն, ապրել հոգեւոր եւ մշակութային լիարյուն կյանքով, բարձր զարգացած քաղաքակրթությամբ, ծաղկուն ու բարգավաճ տնտեսությամբ: Ասել է թե՝ Մայր եկեղեցու 1000-ամյակի խորհուրդը շատ ավելի լայն է. դա նաեւ հայոց պետականության, հոգեւոր եւ մշակութային կյանքի ծաղկման 1000-ամյակն է:

***Գառնիկ ՇԱԽԿՅԱՆ***
***Ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր***




# ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

## ԱՐՏԱՎԱԶԴ II-Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Մեծ Հայքի թագավորության գահին Ք. ծ. ա. 55 թվականին Տիգրան Մեծին հաջորդեց նրա որդին Արտավազդ II-ը: Արտավազդը իր դրամների վրա շարունակում է անվանվել «արքայից արքա», ինչը վկայում էր Մեծ Հայքի թագավորության հզորության մասին: Արտավազդը բարձր մտավոր ընդունակությունների տեր անձնավորություն էր: Պլուտարքոսի վկայությամբ Արտավազդը գրել է ողբերգություններ, ճառեր և պատմական երկեր հունարեն լեզվով: Արտավազդի նվիրվածությունը գիտությանը և արվեստին հունա-հռոմեական աշխարհի հետ մշակութային մերձեցման եզրերի վկայությունն է, սակայն հայ-հռոմեական քաղաքական հարաբերությունները իրենց վրա կրում էին Հռոմի նվաճողական քաղաքականության կնիքը:

Հայաստանի նկատմամբ թե Հռոմի և թե Պարթևստանի կողմից վարած ծավալապաշտ քաղաքականությունը շարունակվեց որոշ ընդմիջումներով: Ուստի, Արտավազդը աշխատեց Մեծ Հայքի թագավորության հզորությունը խարսխել ներքին կենտրոնաձիգ, և արտաքին հակամարտող տերությունների ուժերը իրար դեմ օգտագործելու քաղաքականության վրա: Արտավազդը, նկատի ունենալով իր երկու եղբայրների պատանդությունները դեռևս Տիգրան Մեծի ժամանակ և դրանց ծանր հետևանքները, գահի թեկնածուների ոտնձգությունները կանխելու նպատակով իր մյուս եղբայրներին և քույրերին հեռու պահեց արքունիքից: Մովսես Խորենացին այդ մասին գրել է. «Հայոց վրա թագավորում է Տիգրանի որդի Արտավազդը: Սա իր եղբայրներին և քույրերին բնակեցնում է Աղիովիտ և Առբերանի գավառներում, նրանց ժառանգություն թողնելով այդ գավառներում գտնված արքունական գյուղերը, առանձին եկամուտով և ռոճիկով, նման նրանց այն ազգականներին, որ գտնվում էին Հաշտեանքի կողմում... սահմանելով, որ նրանք չապրեն Այրարատում, թագավորի բնակության տեղում»:

Արտաքին քաղաքականություն վարելիս Արտավազդը աշխատեց խուսափել Հռոմի և Պարթևստանի հակամարտության մեջ ստիպողաբար ներքաշվելուց, իսկ հնարավորության դեպքում նրանց ուժերը օգտագործել իրար դեմ:

Հռոմում առաջին եռապետություն (Ք. ծ. ա. 59-53 թթ.) կազմած Հուլիոս Կեսարի, Մարկոս Լիկինիոս Կրասոսի և Պոմպեոսի միջև եղած մրցակցությունը կաշկանդում էր Հռոմի ուժերը Արևելքում լայնածավալ նվաճողական քաղաքականության իրականացման ուղղությամբ: Մյուս կողմից, Հուլիոս Կեսարի Արևմուտքում իրականացրած հաջող արշավանքների փառքը հանգիստ չէր տալիս Մարկոս Կրասոսին՝ Սպարտակի ապստամբության ճնշողին:

Ք. ծ. ա. 54 թ. Մարկոս Կրասոսը, մտադրվելով արշավել Պարթևստանի դեմ, մեծաթիվ բանակով եկավ Սիրիա-Ասորիք հռոմեական նահանգ: Նա լի էր ամբարտավանությամբ և գոռոզությամբ՝ մտադրվելով առաջին հերթին նվաճել Պարթևստանը: Արտավազդ II-ը կռահում էր, որ պարթևների դեմ հաղթանակ տանելուց հետո Կրասոսը, չնայած հայ-հռոմեական պայմանագրի առկայության, կձգտեր Հայաստանը ևս ենթարկել Հռոմին: Արտավազդը Հայոց դրանիկ գնդով գնաց Ասորիք և Կրասոսին առաջարկեց իր օգնությունը՝ պարթևների դեմ կայանալիք արշավանքի դեպքում տրամադրել հեծելազոր և հետևազոր, ինչպես նաև արշավանքը կատարել Հայաստանով, որտեղ հռոմեացիները կստանային անհրաժեշտ պարենը: Սակայն հռոմեական զորավարը Եդեսիայի Աբգար II թագավորի խորհրդով նախընտրեց Միջագետքի ճանապարհը, ուր հռոմեական կայազորներ էին տեղակայված: Մովսես Խորենացին իր «Հայոց պատմություն»-ում հատուկ խոսել է Աբգարյանների հայկական ծագման մասին, ինչը ապացուցվում է նաև անանուն եդեսացու հաղորդումներով:

Երբ Իրանի արքա Որոդես II-ը (Ք. ծ. ա. 57-37 թթ.) տեղեկացավ հռոմեական զորքերի արշավանքի մասին, Սուրեն զորավարին ուղարկեց Կրասոսի դեմ, իսկ ինքը պարսից զորքի մյուս մասով ներխուժեց Հայաստան, որպեսզի Արտավազդը օգնություն չուղարկեր Կրասոսին: Սակայն Արտավազդը կանխազգաց Կրասոսի արկածախնդրության հետևանքները և շտապեց ամրապնդել կապերը պարթևների հետ: Որոդեսը պատրաստ էր դաշինքի նորոգմանը: Արտաշատ գալով՝ Որոդեսը հայ-պարթևական դաշինքը ամրապնդեց Արտավազդի քրոջ հետ իր որդու՝ պարթև արքայազն Բակուրի ամուսնությամբ: Մինչ Կրասոսը, անցնելով Եփրատը, պատրաստվում էր պարթևների դեմ վճռական ճակատամարտի, Արտավազդը և Որոդեսը հարսանեկան արարողություններ էին կատարում Արտաշատում:

Կրասոսի բանակը Հյուսիսային Միջագետքում մոտեցավ Խառան քաղաքին, որտեղ Ք. ծ. ա. 53 թվականին տեղի ունեցավ վճռական ճակատամարտը: Պարթևական հեծելազորը Սուրեն զորավարի գլխավորությամբ ջախջախեց հռոմեացիներին, ուր հազարավոր գերեվարված և սպանված հռոմեացիների թվում էր նաև Կրասոսը: Նրան սպանեց պարթև էքսաթրեսը, կտրելով Կրասոսի գլուխը: Սուրեն զորավարը սուրհանդակ Սիլլակեսի միջոցով Կրասոսի գլուխն ուղարկեց Արտաշատ:

Ըստ Պլուտարքոսի՝ սուրհանդակը Կրասոսի գլուխը բերեց Արտաշատի թատրոն, ուր Եվրիպիդեսի «Բաքոսյաններ» ներկայացման ժամանակ ներկա էին Արտավազդ և Որոդես թագավորները: Սիլլակեսն այն նետում է դահլիճի մեջտեղը: Հույն դերասան Յասոնը, վերցնելով Կրասոսի գլուխը, սաստիկ հուզված արտասանում է. «Մենք բերում ենք լեռներից, տուն վերադառնալով՝ նոր սպանված եղջերուն, բախտավոր մի որս»: Եվ այս մեծ հրճվանք պատճառեց ներկաներին, իսկ երբ երգչախումբը և մենակատարը փոխնիփոխ երգեցին՝ «Ո՞վ սպանեց», «Իմն է այդ հերոսությունը», էքսաթրեսը տեղից վեր թռավ և Կրասոսի գլուխը խլեց Յասոնից՝ ի նշան այն բանի, որ այդ բառերը պատշաճ էր ինքը արտասաներ: Արտավազդը նրան պարգևատրեց, ըստ Հայաստանում ընդունված կարգի, իսկ Յասոնին մեկ տաղանդ արծաթ տվեց: «Եվ այսպես, որպես ողբերգություն ավարտվեց Կրասոսի արշավանքը»,- գրել է Պլուտարքոսը:

Քիչ անց Որոդեսի հրամանով թունավորում են Սուրեն զորավարին, որի փառքի հանդեպ պարթևական թագավորը լցված էր նախանձով՝ նրան համարելով իր գահի վտանգավոր ախոյանը:

Հռոմեական լեգեոնների խայտառակ պարտությունը ոգեշնչել էր պարթևներին, և Ք. ծ. ա. 51 թվականին նրանց զորքերը պատանի արքայազն Բակուրի (բայց իրականում Վասակ զորավարի) գլխավորությամբ ներխուժեցին Ասորիք: Ըստ Դիոն Կասիոսի, պարթևական զորքերն Անտիոք քաղաքի պաշարման ժամանակ պարտություն կրեցին հռոմեացիներից և նահանջեցին, իսկ այնուհետև պարտվեցին Անտիգոնիա քաղաքի մոտ:

Կիլիկիայի հռոմեական կուսակալ Կիկերոնի (Ցիցերոն) նամակներից իմանում ենք, որ հռոմեապարթևական այդ պատերազմի ժամանակ Հռոմը զգուշանում էր Արտավազդից: Կիկերոնը գրել է, որ հռոմեական զորքով ինքը Կիլիկիայից եկել է Կապադովկիա, որպեսզի «Հայոց թագավոր Արտավազդը... իմանա, որ Հռոմի ժողովրդի բանակը հեռու չէր իր սահմանից»: Կիկերոնի անհանգստությունը, թերևս, թելադրված էր այն հանգամանքով, որ պարթևների կողմից Ասորիքի վրա հարձակման ընթացքում հայկական զորքերը կարող էին անցնել Եփրատը և մտնել Կապադովկիա:

Հուլիոս Կեսարի դավադրաբար սպանությունից հետո Ք. ծ. ա. 44 թվականին Մարկոս Անտոնիոսը, Գայոս Օկտավիանոսը և Մարկոս Լեպիդոսը կազմեցին երկրորդ եռապետությունը Հռոմում: Երկու տարի անց Անտոնիոսը գալիս է Ասիա և տեսնելով Կիլիկիա ժամանած Եգիպտոսի թագուհի Կլեոպատրային՝ սիրահարվում է նրան: Դիոն Կասիոսի հավաստմամբ՝ Որոդեսն իր որդու՝ Բակուրի հետ պատերազմեցին Հռոմի դեմ և գրավեցին Ասորիքը, Փյունիկիան և Պաղեստինը, քանի որ Անտոնիոսը զբաղված էր իր սիրավեպով, ինչը սակայն պատերազմի նման ելքի միակ պատճառը չէր: Հռոմում հենց կարճ ժամանակով վերջացան եռապետների միջև ծագած երկպառակությունները, Մարկոս Անտոնիոսը գործի դրեց Արևելք եկած հռոմեական զորքերը Վենտիդիոս Բասոսի գլխավորությամբ: Ք. ծ. ա. 38 թվականին Բասոսը վերջնականապես ջախջախեց Բակուրի գլխավորած պարթևական զորքը, որի մեծ մասը սրի քաշվեց: Բակուրի կտրված գլուխը Բասոսի հրամանով ցուցադրվեց Ասորիքի քաղաքներում: Ասորիքի կառավարիչ Մարկոս Անտոնիոսը, նախանձելով Բասոսի համբավին, նրան զրկեց իշխանությունից:

Պարթևստանում քաղաքական խառնաշփոթ էր տիրում և այդ պայմաններում Որոդեսը գահը զիջեց իր մյուս որդուն՝ Հրահատ IV-ին (Ք. ծ. ա. 38-2 թթ.), որն իր գահի անվտանգությունը ապահովելու համար կոտորեց իր եղբայրներին, ինչպես նաև սպանեց հորը:

Դրան հակառակ, Արտավազդ թագավորը գահի թեկնածուներին չեզոքացնելու խնդիրը լուծել էր քաղաքակիրթ ճանապարհով՝ իր եղբայրներին և քույրերին բնակեցնելով Վասպուրական աշխարհի Աղիովիտ և Առբերանի գավառներում Վանա լճի մոտ:

*Էդուարդ ԴԱՆԻԵԼՅԱՆ*
*Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏՅԱՆԸ

*Սկիզբը էջ 5*

Սուրբ Հոգին միշտ նրանց սրբազան հեղինակների հետ էր՝ ներքուստ խոսելով ու գրել տալով, իբրև Վարդապետ՝ Իր աշակերտներին սովորեցնելով գրել: Հիշենք Քրիստոսի խոսքն Իր առաքյալներին. «Իսկ Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, Ում Հայրը կուղարկի Իմ անունով, Նա ձեզ ամեն բան կուսուցանի և ձեզ կհիշեցնի այն ամենը, ինչ Ես ասացի ձեզ» (Հովհ. ԺԴ 26): Այսինքն՝ առաքյալները հիշողությամբ չէ, որ շարադրեցին իրենց գրվածքները, այլ Սուրբ Հոգու ներշնչանքով:

Պետրոս առաքյալը վկայում է. «Մարգարեությունը ոչ թե լոկ մարդկանց կամքի տրվեց երբևէ, այլ Սուրբ Հոգուց մղված է, որ խոսեցին Աստծո սուրբ մարդիկ» (Բ Պետ. Ա 21):

Ի դեպ Եկեղեցու հայրերն ու վարդապետները ներշնչանքով գրելը կոչում են Սուրբ Հոգով գրել, և իրենք էլ նույն հոգով են շարադրել իրենց հոգեշահ գրվածքները:

Սուրբ Հոգին, զորացնելով սրբազան հեղինակների հոգեկան ու մտավոր կարողությունները, այդուհանդերձ բնավ չէր ճնշում մարդկային բնատուր ընդունակությունները, չէր ոչնչացնում նրանց անհատականությունը, բնավորությունն ու հակումները: Հայտնությունը շարադրելիս մարգարեներն ու առաքյալները պահպանում էին իրենց ինքնագիտակցությունը և ինքնությունը: Այս հանգամանքով են բացատրվում սրբազան գրքերի բովանդակության և հատկապես դրանց շարադրանքի ոճի, լեզվի, պատկերների, արտահայտությունների զգալի տարբերությունները՝ կախված հեղինակի հոգեկան խառնվածքից:

Այսպես Պողոս առաքյալի թղթերում ի հայտ է գալիս նրա բուռն բնավորությունը, իսկ Հովհաննես ավետարանչի գրվածքներում՝ նրա քաղցր հոգին: Դանիել մարգարեն պետական այր էր և խոսում էր ինչպես պետական այր:

*Շարունակելի*

*Գրիգոր ԴԱՐԲԻՆՅԱՆ*

# ԱՆՀԱՏԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ

Այսօր Հայաստանում գործում է «Անհատի և ընտանիքի պաշտպանության միավորումը», որն արդեն քիչ թե շատ հայտնի է իր ծավալած գործունեությամբ:

Այս միավորման աշխատակիցներից էլ փորձեցինք ստանալ մեր ընթերցողներին հուզող որոշ հարցերի պատասխանները:

1988-ի երկրաշարժից ի վեր, բարեգործության անվան տակ, Հայաստան ներխուժեցին կրոնական բազմաթիվ կազմակերպություններ, որոնցից շատերի մասին մինչ այդ անգամ չէինք լսել: Հայ ժողովրդին երկրաշարժի հասցրած ծանր վերքն ու վիշտը վերջիններիս մեծ մասն ընկալեց որպես հոգիներ որսալու և ազդեցության գոտիներ ստեղծելու իդեալական պայման:

Սա առիթ հանդիսացավ «Անհատի և ընտանիքի պաշտպանության միավորման» համար ուսումնասիրելու ՀՀ-ում գործող կրոնական կազմակերպությունների ծագումն ու գործունեությունը: Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ պատկերը ոչ միայն անմխիթար է, այլև խիստ անհանգստացնող: Հետաքրքրության առարկա էր նաև այն հանգամանքը, թե նման բնութագիր ունեցող կազմակերպությունները (որոնց մեծ մասը ձևավորվել է ԱՄՆ-ում), տասնամյակներ շարունակ գործելով Եվրոպայում, արդյո՞ք իրենց վրա չեն հրավիրել հասարակական ու պետական կազմակերպությունների ուշադրությունը: Հետագա ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ եվրոպական առաջադեմ պետություններում վաղուց ի վեր գործում են աղանդների դեմ պայքարող և նրանց զոհերին աջակցող հասարակական կազմակերպություններ: Ավելին, վերջիններիս գործունեության արդյունքները, ինչպես նաև նրանց դեմ ուղղված աղմկալից դատավարությունները հիմք են հանդիսացել, որ եվրոպական մի շարք երկրներում ստեղծվեն աղանդների գործունեությունն ու դրանց վտանգավոր հետևանքներն ուսումնասիրող կառավարական հանձնաժողովներ: Խնդիրն անգամ Ֆրանսիայի, Գերմանիայի, Բելգիայի խորհրդարանների օրակարգի հարց է դարձել, քննարկվել Եվրոպայի խորհրդարանական ասամբլեայում:

Աղանդներն իրենց քայքայիչ գործունեությունն իրականացնում են մեծ հաջողությամբ, որին նպաստում է երկու հիմնական գործոն. հասարակությունն անիրազեկ է իր իրավունքներից, դրանցից օգտվելու ձևերից և արդի կրոնական ոլորտում տիրող խառնաշփոթություններից, իսկ այդ իրավունքների պաշտպանության պետական մեխանիզմները լիարժեք չեն գործում մանավանդ Հայաստանում: Իրավիճակի մասին կազմած առաջին իսկ պատկերացումները դրդեցին նախ և առաջ հրատապ կարգով այդ մասին իրազեկել իշխանություններին, պետական և հասարակական գործիչներին: Հենց այս գործունեության ընթացքում էլ ձևավորվեց հասարակական կազմակերպություն ստեղծելու գաղափարը, և ստեղծվեց «Անհատի և ընտանիքի պաշտպանության միավորումը», որը որպես այդպիսին դեռևս միակն է Հայաստանում:

«Անհատի և ընտանիքի պաշտպանության միավորումը» հասարակական կազմակերպություն է՝ ստեղծված 2001 թվականի աշնանը: Իր գործունեության համեմատաբար կարճ ժամանակահատվածում կազմակերպությունը հրատարակել է աղանդների ուսումնասիրության թվով հինգ տեղեկագիր «Զգուշացիր աղանդից» խորագրով. «Ինքնապաշտպանության մարտավարություն. Տասը ստուգիչ հարց», «Եհովայի վկաները», «Սայենթոլոգիայի եկեղեցին», «Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցին կամ մորմոնները» և «Կյանքի խոսքը կամ խարիզմատներ»:

*Շարունակությունը էջ 8*

# ԼՈՒՐԵՐ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ

## ԽԱՉԳՅՈՒՂՈՒՄ (ԾԱԼԿԱՅԻ ՇՐՋԱՆ) ՎԵՐԱԲԱՑՎԵՑ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ

Մեծ տոնախմբություն էր հեռավոր Ծալկայի շրջանի հայկական 13 գյուղերից մեկում՝ Խաչգյուղում: Հակառակ քաղաքական օրավուր շիկացող իրավիճակին, սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմաններին, ինչպես նաեւ անցանկալի արտագաղթին, այնուամենայնիվ, խաչգյուղցին ուրախանալու առիթ գտել էր, այն է՝ պապերից իրեն ավանդված հավատքի վերանորոգումը, վերահաստատումն ու վերակենդանավորումը, ինչի վառ վկայությունն էր հոկտեմբերի 6-ին վերաբացված գյուղի Ս. Գեւորգ գեղատես եկեղեցին:

Զարմանալի բնավորություն ունի այս տարածաշրջանի հայը: Ամեն մի դժվարություն հաղթահարելով, դիմագրավելով 70 տարիների աստվածմերժության գաղափարախոսությանը՝ ցայսօր հարազատ զավակի նման փայփայել եւ կանգուն ու անվնաս մեր օրերն է հասցրել սեփական աղոթատունը, թեեւ ոչ աղոթք է անգիր հիշում, ոչ էլ եկեղեցական ավանդույթ ու սովորույթ է մտապահել: Ինչ էլ գիտի, կիսատ-պռատ ծիսական արարողակարգեր են, որոնց շնորհիվ, սակայն, մշտապես վառ է պահել հայկական իր օջախը, նորածին մանկանը շնորհել հայեցի դաստիարակվելու հնարավորություն:

### ՄԻ ՓՈՔՐԻԿ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Խաչգյուղը գտնվում է Վերին Ծալկայի հյուսիսային մասում՝ Թրիալեթի լեռնաշղթայի հարավային լանջի ստորոտում: Իր գեղեցիկ դիրքով հրապուրել եւ այդ վայրն է բերել շատ ու շատ վերաբնակների: Դեռեւս հնում այստեղ եղել է բնակավայր, ինչի մասին հաստատում են հնագիտական պեղումները: Սակայն ներկայիս գյուղը հիմնադրվել է 1837-1848 թթ. ընթացքում, թեեւ դրանից առաջ եւս հայեր ապրել են այստեղ: Այդ մասին է վկայում գյուղի հինավուրց Ս. Գեւորգ եկեղեցին, որ Հուշարձանների պահպանության կոմիտեի կողմից հաշվառվել է եւ համարվել 12-13-րդ դարերի կառույց: Խաչգյուղի բնակիչները հիմնականում եկել են հարեւան Աշկալայից: Աշկալայից են տեղափոխվել Մանասյանները, Մազմանյանները, Մարկոսյանները, Քլոյանների, Տեր-Բալյանների մի մասը: Հետագայում գյուղը համալրվել է այլ տեղերից վերագաղթածներով:

Գյուղի հյուսիսային կողմի բարձրադիր մասում է համեստորեն ծվարել հինավուրց մատուռը՝ Ս. Կարապետը, որ ունի իր ուխտի օրը: Այն տոնախմբվում է գարնան գալու հետ մեկտեղ: Եվ կենդանանում է Ս. Կարապետ մատուռը, որտեղ ի կատար ածի մեծաթիվ հավատացյալների նվիրական երազանքը, իղձն ու փափագը:

Ուր եւ բնակություն են հաստատել մեր հայրենակիցները, պապերից ավանդված սովորության համաձայն, առաջինն սկսել են սեփական աղոթատան կառուցումը: Տեղի Ս. Գեւորգ եկեղեցին ասվածի վառ վկայությունն է: Այն սկզբում փայտածածկ է եղել, հետո մի քանի անգամ վերանորոգվել է, փոխվել է տանիքը: Բայց անհավատության 70 տարիներին այս եկեղեցին եւս վերածվել էր պահեստի: Եվ միայն 2002 թ. գյուղացիների ջանքերով մաքրվեց կուտակված աղբից ու անպիտան իրերից: Իսկ ծնունդով խաչգյուղցի ռուսաստանաբնակ Խորեն Բուլուդյանի հովանավորությամբ ու ֆինանսական աջակցությամբ վերանորոգվեց եւ ստացավ նախկին տեսքը՝ դառնալով ավելի գեղեցիկ ու գողտրիկ:

Եկեղեցու վերջին քահանայի՝ տեր Խորենի ծոռն է բարերարը, որ ի պատիվ եւ ի հիշատակ նրա՝ կրում է Խորեն անունը: Ինչպես ինքն է ասում, հենց քահանա պապի բարի անունը վառ պահելու համար էլ որոշեց կրկին կյանքի կոչել հարազատ գյուղի այնքան սիրելի եկեղեցին, ուր դարձյալ կլսվի մկրտվող մանկան ճիչը, կհնչի նորապսակների՝ «Տեր եմ» խոստովանությունը:



## ՎԵՐԱԲԱՑՈՒՄ. ԴՌՆԲԱՑԵՔ

Հոկտեմբերի 5-ին, Վիրահայոց թեմի նորանշանակ առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանի բարձր կարգադրությամբ, Ծալկա մեկնեց Սամցխե-Ջավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Բաբկեն աբղ. Սալբիյանի գլխավորած պատվիրակությունը Ծալկայի տարածաշրջանի Խաչգյուղում կատարելու դռնբացեքի կարգը: Խմբի հետ էր նաեւ Ախալքալաքի Ս. Խաչ առաջնորդանիստ եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Սամվել քհն. Թորոսյանը:

Հոկտեմբերի 6-ի վաղ առավոտյան Ս. Գեւորգ եկեղեցու տարածքը մարդաշատ էր: Այստեղ էին հավաքվել ոչ միայն տեղաբնակները, այլեւ մեծաթիվ հավատացյալներ հայկական մյուս գյուղերից, քանզի հայկական ցանկացած գյուղում կատարվող տոնախմբություն համարվում է նաեւ մյուսներինը:

Հանդիսակարգն սկսվեց առավոտյան ժամերգությամբ: Այնուհետեւ Տ. Բաբկեն աբղ. Սալբիյանի հանդիսապետությամբ ու ձեռամբ կատարվեց դռնբացեքի արարողություն, որին մասնակցում էին Տ. Սամվել քհն. Թորոսյանը, ինչպես նաեւ Ծալկայի տարածաշրջանի հայկական 13 գյուղերի միակ հոգեւոր սպասավոր Սանասար սրկ. Ղուլիկյանը:

Թափոր կազմած եւ «Ուրախ լեր» շարականի երգեցողությամբ հոգեւորականաց դասը, հավատացյալների ուղեկցությամբ, առաջնորդվեց դեպի եկեղեցու դուռը: Հենց մուտքի մոտ դրսի կողմից, համաձայն «Մաշտոց» ծիսարանի, ընթերցվեցին սուրբգրային հատվածներ եւ համապատասխան սաղմոսներ:

Ապա հնչեց «Բաց մեզ, Տէր» հոգեզմայլ շարականը, եւ համապատասխան հարց ու պատասխանից հետո հանդիսավորաբար բացվեցին 1924 թվականից առ այսօր փակված եկեղեցու դռները՝ գրկաբաց ներս հրավիրելով ներկաներին: Աղոթատան ներսում եւս, հայր սուրբի գլխավորությամբ, շարունակվեցին սուրբգրային ընթերցվածները, սաղմոսասացությունն ու շարականների երգեցողությունը:

Ուրախառիթ հանդիսության ավարտից հետո ներկաներին շնորհավորանքի ու բարեմաղթանքի խոսքեր հղեց Սամցխե-Ջավախքի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Բաբկեն աբեղա Սալբիյանը՝ ցանկանալով, որ հավատացյալներով մշտապես լեփ-լեցուն լինի Ս. Գեւորգ եկեղեցին, առավել ամուր ընտանիքներ կազմվեն, եւ մանկական ձայներից զրնգան կամարները:

Հատուկ գնահատանքի խոսք ուղղելով բարերար Խորեն Բուլուդյանին՝ նշեց, որ թեեւ նա աշխատում է հեռավոր Լեռնային Ալթայում, սակայն չի մոռացել հայրենի գյուղը, համագյուղացիներին, նրանց առօրյա հոգս ու ցավը եւ մշտապես պատեհ առիթը բաց չի թողնում նրանց սատարելու համար:

Հավարտ խոսքի՝ հայր սուրբը նվերներ հանձնեց բարերարին անձամբ իր եւ Վիրահայոց թեմի առաջնորդական տեղապահ հայր Վազգենի կողմից:

Եկեղեցու վերաբացման հանդիսավոր արարողակարգին ներկա էին նահանգային, շրջանային եւ տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, պետական այրեր, մեծաթիվ հյուրեր Հայաստանից եւ մայրաքաղաք Թբիլիսիից:

Հատուկ հրավիրյալների թվում էին նահանգապետ Լեւան Մամալաձեն եւ շրջանային վարչության նախագահ Էլդար Խրիստիանին, ովքեր իրենց սրտի խոսքը հղեցին գյուղաբնակչությանը՝ առանձնակի շեշտելով, որ հայ եւ վրաց ժողովուրդների բարեկամությունը դարաբույր է ու դարահեւք:

Դռնբացեքի արարողությունից հետո նորաբաց եկեղեցում կատարվեց անդրանիկ սուրբ մկրտությունը: Մկրտվեցին եւ Աստծու որդեգիրները դարձան բարերարի երեք երեխաները եւ մեծաթիվ խաչգյուղցիներ:

Կատարվեց նաեւ մատաղօրհնություն:

Հոգեւոր արարողակարգից հետո, սակայն, հանդիսությունը չավարտվեց: Այն իր շարունակությունը գտավ գյուղի հարսանյաց սրահում: Բարերարի կողմից բացված սիրո ճաշի առատ սեղանների շուրջ մինչ ուշ գիշեր շարունակվեցին ուրախ երգն ու պարը՝ օրը վերածելով իսկական ժողովրդական տոնախմբության:

*Մարիամ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

# ԱՆՀԱՏԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ

*Սկիզբը՝ էջ 6*

Օգտվելով խղճի ու դավանանքի ազատությունից՝ կրոնական բազմաթիվ կազմակերպություններ իրենց գործունեության ընթացքում ամեն քայլափոխի ոտնահարում են իրենց հայրենի կրոնը դավանող կամ ընդհանրապես ոչ մի կրոն չդավանող անհատների իրավունքներն ու ազատությունները: Այսինքն՝ տեղի է ունենում հասարակական կարգի, հասարակության առողջության ու բարոյականության սահմանադրական նորմերի ոտնահարում: Այսպիսով՝ նման խմբերի ու կեղծ իրավապաշտների համար խնդրո առարկա է դառնում եւ արժեքավորվում է ոչ թե մարդ էակը, այլ նրան վերագրվող իրավունքների ու ազատությունների հնարամիտ շահարկումն ու շահառությունը: Ելնելով սրանից՝ «Անհատի եւ ընտանիքի պաշտպանության միավորումն» իր համար խնդիր դրեց ուշադրություն հրավիրել այս հարցի վրա եւ պաշտպանել անտեսված իրավունքներն ու ազատությունները:

«Անհատի եւ ընտանիքի պաշտպանության միավորումն» իր հեռանկարն է համարում հասնել հասարակության մի այնպիսի վիճակի, երբ նրա անդամները կլինեն հոգեւոր տեսակետից հրազեկ եւ ընտրություն կատարելիս սկզբունքորեն ազատ (զերծ կողմնակի ճնշող ցանկացած միջամտությունից), սեփական իրավունքներին գիտակ եւ ունակ դրանք պաշտպանելու: Այս հեռանկարին հասնելու համար միավորումը որդեգրել է հետեւյալ նպատակը. աղանդավորական կազմակերպությունների ազդեցության տակ ընկած քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը, բնականոն կյանքի վերականգնմանը նպաստելը, ազգային-հոգեւոր արժեքների պաշտպանությունը:

Այս նպատակից ելնելով՝ կազմակերպությունն իր առջեւ դնում է մի շարք կարեւոր խնդիրներ: Դրանք են.

**ա. Ստանձնել վտանգավոր աղանդավորական կազմակերպությունների հակօրինական գործունեության հետեւանքով տուժած երեխաների, անհատների ու ընտանիքների իրավունքների պաշտպանությունը կամ առնվազն նպաստել դրան:**

**բ. Կարեւորելով ոչ միայն տուժած անձանց իրավունքների պաշտպանությունը, այլեւ աղանդից դուրս եկած անձանց հոգեկան ցնցումներից ու խանգարումներից ձերբազատվելու եւ բնականոն կյանքին վերադառնալու գործը՝ ստեղծել վերականգնողական կենտրոններ:**

գ. Ընտրության ազատությունն ապահովելու նպատակով հանրությանը մատուցել անկողմնակալ տեղեկություն աղանդավորական կազմակերպությունների վտանգավոր գործունեության մասին (տեղեկատվական հանրամատչելի ձեռնարկների հրատարակում, սեմինարների ու խորհրդաժողովների կազմակերպում):

դ. Իր գործունեության ընթացքում նախատեսում է.

- *համագործակցել համապատասխան մասնագետների հետ՝ նպաստելով այս ոլորտի աշխուժացմանը,*
- *հասարակական եւ պետական մարմինների ուշադրությունը հրավիրել աղանդավորական կազմակերպությունների գործունեության այնպիսի վտանգավոր հետեւանքների վրա, ինչպիսիք են անչափահասների ինքնասպանությունները, անհատի զոմբիացումը, թշնամանքի, կրոնական ատելության ու խտրականության սերմանումը, հասարակության հիմքը կազմող ընտանիքի քայքայումը եւ այլն,*
- *սեփական գործունեության միջոցով նախապատրաստել ու շահագրգռել իշխանություններին՝ պետական մակարդակի վրա դնելու սույն խնդրի լուծումը:*

ե. Գիտակցելով, որ վտանգավոր գործողությունների կանխարգելման լավագույն պաշտպանական միջոցը օրենսդրությունն է՝ ծանոթանալ տվյալ ոլորտի վերաբերյալ օտարերկրյա, մասնավորապես եվրոպական երկրների օրենսդրությանը, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունների ընդունած բանաձեւերին եւ դրանց ծանոթացնել հանրությանը:

Պետք է նկատի ունենալ, որ աղանդների վնասակար գործունեության կասեցումը մարդու իրավունքների պաշտպանության գաղափարի ուղղակի դրսեւորումն է: Ուստի, միավորումն իր որդեգրած խնդիրների լուծումը տեսնում է մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանությանն ուղղված ՀՀ օրենսդրության եւ ՀՀ կողմից վավերացված Մարդու իրավունքների միջազգային դաշնագրերի շրջանակներում:

*Պատրաստեց*
*Համիկ ՔԵՐՈԲՅԱՆԸ*

# ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄՈՒՄ

*Սկիզբը՝ էջ 7*

Այս ուխտագնացության շնորհիվ շատերը, խորհրդական ու աղոթական հայեցողությամբ, անցյալը դարձրին ներկա եւ հաղորդվեցին անցյալին՝ հոգու, սրտի եւ մտքի անդրադարձումներով: Ուխտագնացությունը ժամանակավորից դեպի հավիտենականը, մարմնավորից դեպի հոգեւորը, ներկայից դեպի իր գոյության խոր արմատներն ուղղված բնական ձգտման իրական, շոշափելի արտահայտություն է: Իսկ Սբ. Պատարագին ներկա գտնվող աշակերտները, կարծես, հավիտենականության ու շարունակելիի խորհուրդն էին եկել ապացուցելու:

Ուխտավորներից յուրաքանչյուրը, հավատքով եւ իմաստնությամբ առլեցուն, քաջ գիտակցում էր իր անկատարությունն ու մեղանչականությունը եւ պահանջ էր զգում, Աստծո եւ սրբի հետ հաղորդակցվելով, իմաստավորել իր կյանքը ու սրբավայրից զորություն ստանալով՝ դիմակայել գալիք փորձություններին:

*Նունե ԲԱԼՅԱՆ*
*Գուգարաց թեմի ՔԴԿ ուսուցչուհի*

## ԵԿԵՂԵՑԱՍԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀՈՒՄ

Հայկական մշակույթը, հանդիսանալով լույսի ու բարու արտահայտություն, դարերի քառուղիներում հղկել ու կերտել է հայ քրիստոնյայի լուսավոր կերպարը: Այս գիտակցելով՝ իրեն եկեղեցասեր համարող յուրաքանչյուր երիտասարդի համար պատվի խնդիր է իր եկեղեցու պատմությունն իմանալն ու Մայր եկեղեցու ծոցում ծնունդ առած մշակույթին հաղորդակից լինելը:

Թեմակալ առաջնորդի օրհնությամբ եւ ԵԵՄ-ի հոգեւոր հովիվ տեր Վահան քհն. Ազարյանի նախաձեռնությամբ՝ միության մի խումբ անդամներ Վանաձորի Կառլոս Աբովյանի անվան պատկերասրահում հանդիպում ունեցան համաքաղաքացի գեղանկարիչներ Փափագ Ալոյանի եւ Գեւորգ Առաքելյանի հետ: Ծանոթանալով Վանաձորի նկարիչների «Աշնանային ցուցահանդեսին»՝ երիտասարդները հեղինակներին ուղղեցին իրենց հարցերը՝ բացահայտելու մերօրյա արվեստագետի աշխարհը, հասկանալու նրա գունային ու հորինվածքային մտածողությունը, պարզելու կրոնի ու եկեղեցու դերն արվեստագետի կյանքում ու ստեղծագործության մեջ: Պաշտոնական հարց ու պատասխանը շատ արագ վերածվեց մտերմիկ զրույցի: Երիտասարդները ծանոթացան Լոռու մարզում ապրող եւ ստեղծագործող նկարիչների աշխատանքներին, դրանց ոճային ուղղություններին եւ առանձնահատկություններին: Հանդիպման վերջում նկարիչները երիտասարդներին հորդորեցին պահպանել ու գնահատել հայի ամենաթանկ ժառանգությունները, այն է՝ հավատը, լեզուն, մշակույթը:

Հաճելի եւ կարեւոր համարելով այս հանդիպումը՝ ե՛ւ նկարիչները, ե՛ւ երիտասարդները հոգեւոր հայրերի նախաձեռնությամբ որոշեցին նման հանդիպումները դարձնել բարի ավանդույթ:

*Լուսինե ԲԱԼՅԱՆ*
*Գուգարաց թեմի ԵԵՄ անդամ*

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոն
Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Ստամբուլցյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ ք. Վաղարշապատ, ՔԴԿ
հեռախոս՝ (0+31) 56780, 54510
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան
Ստոր. է տպագր. 16. 10. 2002 թ.
Տպաքանակը՝ 2500 Գինը՝ 50 դրամ